



«Ապատեղեկատվության, տեղեկատվության ու գաղտնիության սահմանը ազգային անվտանգության հարցերում, եւ վերջապես, ի՞նչ է մեղիա տեռորը»

Մայիսի 18, 2021

Համառոտագրություն

Այս քննարկումը կազմակերպվել է ամերիկյան Freedom House իրավապաշտպան կազմակերպության Հայաստանում իրագործվող ծրագրի շրջանակում, որը միտված է Ժողովրդավարության առաջընթացին՝ ապատեղեկատվության դեմ պայքարի միջոցով:

Քննարկումը վարել է Սոսի Թաթիկյանը՝ Freedom House կազմակերպության ծրագրի համակարգողը Հայաստանում:

Բանախոսներն էին.

- Գայանե Աբրահամյան- «Հանուն հավասար իրավունքների» կրթական կենտրոն,
- Հովսեփ Խուրշուդյան- «Ազատ քաղաքացի» քաղաքացիական նախաձեռնությունների աջակցման կենտրոն,
- Էդգար Խաչատրյան- Խաղաղության երկխոսություն,
- Գենյա Պետրոսյան- Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ,
- Գեղամ Վարդանյան- Մեղիա նախաձեռնությունների կենտրոն,
- Նունե Հովսեփյան- Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ,
- Տաթևիկ Առուստամյան- Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն ՊՈԱԿ:

Քննարկմանը մասնակցեց նաև կազմակերպության աշխատակից Անդրանիկ Շիրինյանը:

Սոսի Թաթիկյան

Ինչպես գիտեք, ապատեղեկատվությունը խնդիր է դարձել ամբողջ աշխարհում, սակայն Հայաստանում այն առավել ուժգին է զգացնել տալիս պատերազմի ու հետպատերազմյան ճգնաժամերի, թե ներքին և թե արտաքին համատեքստում: Գաղտնիք չէ, որ դեռևս կոմիդից ու պատերազմից առաջ ապատեղեկատվությունը մեծապես բևեռայնացնում էր հայ հասարակությունը, իսկ կոմիդի ու մանավանդ պատերազմի ճգնաժամերից հետո դա շատ ավելի զգալի դարձավ: Ըստ որում, պետք է տարբերակել դեզինֆորմացիայի՝ ապատեղեկատվության, չճշտված տեղեկատվության (misinformation) և պարզապես ֆեյք նյութի միջև:

Դեզինֆորմացիան միտումնավոր պատմույթների ու լուրերի տարածումն է՝ հասարակական կարծիքը փոփոխելու նպատակով: Միաժամանակ, պետք է նշել, որ դեզինֆորմացիան սովորաբար հարյուր տոկոսանոց կեղծ չի լինում, այլ իր մեջ պարունակում է ճիշտ տեղեկատվության որոշ չափաբաժին՝ այն առավել արժանահավատ դարձնելու համար:

Պատերազմի ընթացքում պետության կողմից տեղեկատվական քաղաքականությունը արժանացել է քննադատության: Հետպատերազմյան շրջանում նույնպես այս ոլորտում խնդիրները շարունակվում են: Ոչ միայն ընդդիմությունը, այլև քաղաքացիական հասարակությունը իշխանություններին մատնացույց են անում իշխանությունների կողմից ժամանակին ու համարժեք տեղեկատվություն չտրամադրելը, պատերազմի ընթացքում մինչև վերջին օրը հաղթանակ խոստանալը, պատերազմի ընթացքում և պատերազմից հետո ճշմարտությունը կոծկելու փորձերը, որի հետևանքով խարխլվել է պաշտոնական տեղեկատվության հանդեպ վստահությունը: Իսկ իշխանությունները ընդդիմությանը մեղադրում են ապատեղեկատվություն տարածելու, սպառնալիքներն ու վտանգներն ուժացնելու, ազգային անվտանգության գաղտնիքներ բացահայտելու, և մեղիատեղորի մեջ: Մեղիատեղոր տերմինը չի հանդիպում միջազգային տերմինաբանությունում, որոշ ուսումնասիրություններ դրա կիրառմանն առաջին անգամ հանդիպել են անցյալ տարվա դեկտեմբերի 12-ին, երբ ադրբեջանցիները գրավեցին Հադրութի վերջին երկու գյուղերն ու Դիզափայտ լեռը և իշխանությունները դա ժխտում էին, անվանելով մեղիատեղոր, սակայն լուրերը երկու օր անց հաստատվեցին, և այդ հատվածում տեղակայված հայ զինծառայողները գերեվարվեցին: Ներկայումս, երբ Սյունիքում ու Գեղարքունիքում արդեն մի քանի օր է առկա են Հայաստանի տարածքային ամբողջականությունը խախտած ադրբեջանական զորքեր, ըստ որում, արտահերթ ընտրություններից մի ամիս առաջ, այս թեման առավել ցցուն է իրեն զգացնել տալիս: Մինչ իշխանությունները հակված էին թեմագնահատելու սահմանամերձ շրջաններին սպառնացող անվտանգային սպառնալիքները, ընդդիմությունը օգտվում էր ոչ լիարժեք տեղեկատվությունից և չափազանցված լուրեր էր տարածում: Այս խնդիրները ձևավորում են քննարկման հետևյալ հարցերը.

- Երբ և ինչ չափաբաժնով տեղեկատվություն պետք է տրամադրեն իշխանությունները ազգային անվտանգության խնդիրների վերաբերյալ, որպեսզի անհրաժեշտ իրազեկություն ապահովեն և թույլ չտան, որ տեղեկատվության պակասը լցվի ապատեղեկատվությամբ?
- Արդյոք հստակ է տեղեկատվության և ապատեղեկատվության սահմանը? Կարող է արդյոք տեղեկատվությունը հերքվել որպես ապատեղեկատվություն, և ընդհակառակը, ապատեղեկատվությունը հաստատվել որպես տեղեկատվություն?
- Չէ որ ազգային անվտանգության ոլորտում սխալ է ամբողջ տեղեկատվության բացահայտումը: Այդ ոլորտում տեղեկատվության զգալի մասը կարող է լինել դասակարգված՝ գաղտնի, սահմանափակ օգտագործման, հանրային և այլն? Հայաստանում ինչպես է դա կարգավորվում?

Արդյոք մեդիատեղոր տերմինը օգնում թե խանգարում է ապատեղեկատվության դեմ պայքարին?

Նունե Հովսեփյան

Ապատեղեկատվություն տարածելը և դրա հիման վրա հանրային տրամադրություններ գեներացնելը այսօր մարտահրավեր է ոչ միայն Հայաստանի, այլև աշխարհի շատ երկրների համար: Եթե պետությունը չի տրամադրում ամբողջական ու օբյեկտիվ տեղեկատվություն ժամանակին, ապա այդ վակուումը կարող է լցվել ապատեղեկատվությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքների համաձայն՝ հանրային հաղորդակցությունը հատկապես թերի է ճգնաժամային իրավիճակներում, և թերություններից մեկն այն է, որ տեղեկատվությունը չի գալիս մեկ աղբյուրից: Սա դժվարություններ է առաջացնում անգամ մեդիագրագետ սպառողի մոտ: Հատկապես ճգնաժամային իրավիճակներում պիտի ամրապնդվի պետական մարմիններ-լրատվամիջոցներ կապը, սակայն Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են հակառակի մասին :

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դիտարկումներով, «մեդիատեղոր» տերմինը շրջանառության մեջ դնելը նպատակ ունի թաքցնելու պետական մարմինների համապատասխան ներկայացուցիչների հաղորդակցման կարողությունների բացակայությունը: Պետական մարմինները սխալ աշխատանքով ստեղծում են տեղեկատվական վակուում, այնուհետև բողոքում են, որ դա լցվում է ապատեղեկատվությամբ, և պաշտոնյաները մեղադրում են բոլորին, սակայն ոչ պետական մարմիններին, որոնց թերացումների պատճառով ստեղծվում է

տեղեկատվական վակուումը: Լրատվամիջոցներում նույնպես առկա են խնդիրներ. հաճախ լրագրողները չեն գործում պատասխանատու լրագրության սկզբունքներին համապատասխան, տարածում են խուճապ, լարվածություն, բայց եթե պետական մարմինները ճգնաժամային իրավիճակներում կարողանան տեղեկատվական ամբողջ քաղաքականությունը կենտրոնացնել մի կետում և պարբերաբար, օպերատիվ ու ճշգրիտ ինֆորմացիա փոխանցեն, ապա իրավիճակը կբարելավվի:

Հանրային հաղորդակցությունը չընդհատվող գործընթաց է, որում ամենակարևորը վստահությունը չկորցնելն է:

Գայանե Աբրահամյան

Ի տարբերություն կեղծ լուրերի, կեղծ պատմույթները ավելի զգուշորեն են տարածվում, և թողնում են ոչ թե շոկային ազդեցություն, այլ հետք հանրային ընկալման ու գիտակցության մեջ, հետևանք են ունենում գնահատականների վրա, ինչպես ժողովրդավարության ու անվտանգության հարցերի հակադրության կեղծ պատմույթի դեպքում: Ընդհանուր առմամբ, հանրային հաղորդակցման թերացումն է պատճառը, որ մենք դաշտում ունենք լուրջ խնդիր, բայց միաժամանակ հեղափոխությունից հետո Հայաստանում ստեղծվեց իրավիճակ, երբ մեդիա դաշտի հիմնական գործիքակազմն անցավ ընդդիմադիր դաշտի ձեռքը, որոնց ներկայացուցիչները էթիկայի կանոններն ու բարոյական նորմերը չպահպանելով՝ անցան հակահարձակման: Անգամ «մեդիատեռոր» տերմինի հետ չհամաձայնվելու դեպքում ակնհայտ է, որ շատ հաճախ լրատվամիջոցներն իսկապես տեռորի են ենթարկում հասարակությանը:

Միայն հաղորդակցման և կառավարության թերացումները չեն ապատեղեկատվության պատճառը. մյուս դաշտը գործում է մարտեր առանց կանոնների տրամաբանությամբ, որովհետև դեռևս 2016 թվականին շատ լրատվամիջոցներ լրատվությունը հասարակությանը հասցնելուց առաջ մտածում էին, թե արդյոք սա հասարակությանը կարող է վնասել, ինչ հետևանքներ կունենա հասարակության վրա: Իսկ ներկայումս կա միտում քաղաքական իշխանությանը վնասելու, բայց արդյունքում վնաս են կրում պետությունն ու հասարակությունը: Պետք է դիտարկել օրենսդրական կարգավորումների անհրաժեշտությունը: Միգուցե ներկայիս իրավիճակում լրատվամիջոցը պետք է վերցնի պատասխանատվությունը կեղծ լուրի համար՝ չբացահայտվող աղբյուրի հղում տալու դեպքում:

Էդգար Խաչատրյան

Խնդիրը բազմակողմանի է, ու դժվար է մի քննարկման ընթացքում լուծումներ գտնել: Ամեն դեպքում, նման խնդիրների լուծման համար անհրաժեշտ են պետական

կարգավորումներ, իսկ լրատվական կազմակերպությունները պետք է ստեղծեն էթիկայի կանոններին համապատասխան մշակույթ:

Պետական գաղտնիք տնօրինող յուրաքանչյուր պետական կառույց պատասխանատու է այդ պետական գաղտնիքի համար: Լրատվամիջոցի կողմից նման տեղեկատվության հրապարակման համար նույնպես պատասխանատու է տեղեկատվությունը տնօրինող պետական մարմինը: Անընդհատ լսում ենք, որ կան «դավաճաններ», ովքեր տեղեկատվությունը տարածում են, սակայն խնդրի լուծումը պետական մարմիններում գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը տրամադրողին կամ տարածողին գտնելն է:

Պետական գաղտնիքի անձեռնմխելիությունն ու հանրային հաղորդակցությունն ապահովելը դինամիկ գործընթաց է, որը կախված է համատեքստից, քաղաքական զարգացումներից, արտաքին զարգացումներից, և միակ ուղին ինստիտուցիոնալ ճկուն լուծումներ գտնելն է, որոնք ներառում են հանրային հաղորդակցության ռազմավարության ապահովում յուրաքանչյուր ինստիտուտի համար: Սակայն դրանք չպետք է դիտարկվեն երկրում տեղի ունեցող դինամիկայից դուրս:

Ընդդիմադիր լրատվամիջոցներն օգտագործում են կեղծ տեղեկատվությունը քաղաքական շահերի խթանման նպատակով: Փաստ է, որ ապատեղեկատվությունը տարածվում է մարդկանց շրջանում որոշակի ընկալումներ ձևավորելու համար: Սակայն, կարգավորման ծայրահեղ դրսևորումը, երբ «պետական» կամ «ծառայողական գաղտնիք» որակվող տեղեկատվության ամբողջ հոսքը սահմանափակվում է նույնպես վտանգավոր է: Գաղտնագրումներն էլ պետք է ողջամիտ լինեն և համապատասխանեն մարդու իրավունքների ու ժողովրդավարության պահանջներին:

«Մեդիատեռոր» տերմինը չի հանդիպում միջազգային գրականության մեջ, հավանաբար դրանով նկատի ունեն անվտանգային ամենազգայուն խնդիրների քաղաքական նպատակներով շահարկումը:

Լուծումները պետք է փնտրել տարբեր հարթություններում: Բոլորս որոշակի դեր ունենք, սկսած հասարակական կազմակերպություններից, ինչպես օրինակ՝ մեդիաոլորտում մեդիագրագիտությանն ուղղված միջոցառումների կազմակերպման միջոցով, վերջացրած պետության կողմից ավելի հստակ մոտեցումների ձևավորմամբ:

Կարևոր է հասկանալ, որ ցանկացած տեղեկատվություն կարելի է օգտագործել քաղաքական նպատակների հասնելու համար, իսկ երևույթները տարբեր քաղաքական հայացքների տեր մարդիկ տարբեր կերպ են ընկալում ու ներկայացնում: Սուբյեկտիվությունը նվազեցնելու միակ տարբերակը ժողովրդավարական ինստիտուտների զարգացումն է, որպեսզի դաշտը դառնա կառավարելի, թափանցիկ,

որն էլ հնարավորություն կտա օգտվողին մի քանի աղբյուր ունենալ ու ճշմարիտ տեղեկատվություն ստանալ:

Գենյա Պետրոսյան

Ապօրինի և չհիմնավորված գաղտնագրման հարցերը առավել քան արդիական են՝ հաշվի առնելով մարտահրավերները և ըստ էության դեռևս համակարգային լուծումներ չունենալու հանգամանքը: Առավել համակարգային և խնդրահարույց հարցերը առնչվում են պետական և ծառայողական գաղտնիքի օրենսդրության շրջանակներում տեղեկատվության ազատության հետ կապված երաշխիքներին: Օրենքը բովանդակային վերանայման կարիք ունի, քանի որ կարգավորումները հնացած են կամ հակասում են ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին: Շրջանառության մեջ դրված նոր օրենքը միայն փոքրաթիվ կամ աննշան փոփոխություններ է պարունակում: Այն կրկնում է գործող կարգավորումները, որևէ առաջընթաց չկա տեղեկատվության ազատության մասին հարցում :

Այս ոլորտում առավել խնդրահարույց է պետական մարմիններին վերապահված բավականին լայն ու անորոշ հայեցողությունը տեղեկատվությունը գաղտնագրելու համար: Պետական մարմիններն իրենց ապահովագրելու նպատակով գաղտնագրում են տեղեկատվությունը առավելագույն ժամկետով՝ առանց գաղտնագրելու անհրաժեշտությունը հիմնավորելու պարտականության: Չկա պատշաճ վերահսկողություն տեղեկատվության գաղտնագրման հիմնավորման, ժամկետի, օբյեկտիվ անհրաժեշտության վերանայու դեպքում տեղեկատվության գաղտնագրման հարցերում:

Գեղամ Վարդանյան

Ներկայիս ճգնաժամային իրավիճակում համարժեք քայլեր չեն ձեռնարկվում դրա հաղթահարման ուղղությամբ: Լրագրությունն ու փաստերի ստուգումը ևս խորը ճգնաժամի մեջ են Հայաստանում: Առկա է վստահության ճգնաժամ և չկան հեղինակություններ: Եթե նախկինում ապատեղեկատվության հետ կապված գործիքակազմում արժեվորվում էր պաշտոնյաների և հանրային գործիչների խոսքը, այժմ այդ խոսքի արժեքն ընկել է: Հաղորդակցության համար պատասխանատուները վատ են կատարում իրենց գործը: Այժմ իրավիճակը բնավ հետհեղափոխական չէ, երբ իշխանությունների կապը քաղաքացիների հետ բարձր կետի վրա էր: Լրացուցիչ աշխատանքը, որը ամենօրյա ռեժիմով պիտի արվեր հանրային հաղորդակցությունը բարելավելու համար, չի կատարվում : Եթե քաղաքական ուժը անընդհատ խոսում է մեղիատեղորից, բայց ինքն իր տնային աշխատանքը չի կատարում, բավարար քայլեր չի անում, հետևություններ չի անում ու չի փորձում օգնել մարդկանց ճիշտ տեղեկատվություն ստանալ, դժվար է առաջ գնալ: Այստեղ կարևոր գործ ունի անելու

հանրային հեռարձակողը՝ Հանրային հեռուստարձակությունն ու ռադիոն: Այն պետք է ջանքեր գործադրի, որպեսզի տեղեկատվության դաշտում մարդիկ ճիշտ լողան: Հանրայինը լրացուցիչ պատասխանատվություն ունի՝ դառնալու վստահելի լրատվամիջոց տեղեկատվությունը և փաստերը ճշտելու ու ստուգելու միջոցով: Շատ լրատվամիջոցներ կան, որոնք հաղորդակցվում են ոչ թե իրենց լսարանի, այլ իրենց բաժնետերերի, գաղափարակից ընկերների, քաղաքական դաշնակիցների հետ: Խմբագրությունների կապը մարդկանց հետ ազդեցիկ գործոն չէ, դրանց մի մասի համար նպատակը ոչ թե քաղաքացուն օգնելն է ճիշտ որոշում կայացնելու գործում, այլ իր քաղաքական խնդիրը կատարելը:

Տաթևիկ Առուստամյան

Հայաստանում առաջացել է վստահության ճգնաժամ, և բոլորիս նպատակը պիտի լինի լուծումների մեխանիզմներ գտնելը, հասարակությանը ապատեղեկատվությունից զերծ պահելը, ու մեղիագրագետ հասարակություն ունենալը: Մակայն մեղիագրագիտության նախաձեռնություններն իրենց չեն արդարացնում, պետք են ինստիտուցիոնալ լուծումներ, որոնք միակողմանի չեն կարող լինել: Պատերազմի ընթացքում ու դրանից հետո խնդիր է անանուն աղբյուրների կողմից տարածվող տեղեկատվությունը, որը տարածվում էր շատ կարդացվող ու դիտվող ունեցող մեդիայում, ինչպես օրինակ՝ Տելեգրամ ալիքներում: Հերքումներն այն արագությամբ ու այն պահին չէին տարածվում, ինչ կեղծ տեղեկատվությունը: Համատեղ համագործակցության միջոցով պետք է լուծումներ գտնել: